

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**



ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019-2023 ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆԸ

- 2019 -

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Մի րեւի՛ Արմավիրցիներ, Արմավիր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (ՀՀԶԾ) ներկայացնում է համայնքի զարգացման տեսլականն առաջիկա հինգ տարիների համար՝ սահմանելով զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտները, այն գործառնական փաստաթուղթ է, որը սահմանում է գործողություններն ու արդյունքները, ինչպես նաև ծրագրի համար հասանելի ֆինանսական միջոցները:

Հակիրճ նկարագրված են համայնքի խնդիրները, զարգացման խոչընդոտները և դրանց ծնող պատճառները, անդրադարձ է կատարվում ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացին՝ նշելով դրա մասնակցային բնույթը:

Արմավիրի ՀՀԶԾ կազմման և իրագործման համար առանձնահատուկ և առանցքային հենք է հանդիսանում համայնքի կառավարման արդյունավետության բարձրացումը և կայուն զարգացումը, մարդկանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը, հանրային տարածքների և շրջակա միջավայրի պահպանությունը, աշխատատեղերի ստեղծման խթանումը, աշխատանքների արդյունավետության բարձրացումը:

Արմավիր համայնքի առաջիկա հինգ տարիների համար զարգացման հիմնական ուղղություններ և գերակա ոլորտներ են սահմանվում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, կրթության, մշակույթի, շրջակա միջավայրի և առողջ ապրելակերպի, սոցիալական պաշտպանության ոլորտները: Համայնքի տեսլականն է Արմավիրը դարձնել անվտանգ, հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր, այցելուների համար գրավիչ, ձեռնարկատիրության զարգացման համար նպաստավոր, զարգացած ենթակառուցվածքներ ունեցող, բարեկարգ, մաքուր ու գրավիչ բնակավայր:

Նախանշված տեսլականը կյանքի կոչելու և շոշափելի արդյունքի հասնելու համար համայնքում առկա են մի շարք խնդիրներ, զարգացման խոչընդոտներ և դրանք ծնող պատճառներ: Դրանք առկա են գրեթե բոլոր ոլորտներում: Վերջին 30 տարիների ընթացքում ոչ բավարար ֆինանսական ներդրումների, դրանց ոչ նպատակային ծախսերի, անհրաժեշտ վերահսկողության բացակայության պատճառով կուտակվել են մի շարք խնդիրներ ապօրինի շինարարության, հողօգտագործման, շենքերի և շինությունների ոչ նպատակային օգտագործման, կոմունալ ենթակառուցվածքների, տրանսպորտի և ճանապարհաշինության, բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման, շրջակա միջավայրի պահպանման, կրթության՝ մասնավորապես նախադպրոցական հիմնարկների շենքային պայմանների և գույքի ոչ բավարար վիճակի, մշակույթի և սպորտի, սոցիալական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտներում:

Հարգելի՛ արմավիրցիներ, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքային տեպլականի, նպատակների, ձգտումների և ջանքերի ամփոփումն է մեկ փաստաթղթում, որը համայնքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումների ամբողջությունն է և պարունակում է այն արդյունքները, որին ձգտում է համայնքը, արտացոլում է այն հարցերը, որոնք համայնքի բնակչության տեսանկյունից առավել կարևորներն են: ՀՀԶԾ-ն համայնքի յուրաքանչյուր բնակչի փաստաթուղթն է, այլ ոչ թե համայնքի ղեկավարինը:

Ուստի կարևորվել է համայնքի ամբողջ բնակչության՝ քաղաքային հասարակության կազմակերպությունների, գործարար շրջանակների մասնակցությունն ու օժանդակումը, ինչպես նաև հետագայում վերահսկողությունը ներկայացված աշխատանքներին, քանզի մասնակցային կառավարումն է ժողովրդավարության ամենակարևոր բաղադրիչը, մասնակցային կառավարումն է ընդգծում այն մարդկանց ներգրավումը կառավարման մեջ, որոնք դուրս են մնացել ավանդական կառավարման գործընթացից:

Համայնքի իրավիճակի նկարագրությունը

Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Արմավիր (նախկին Հոկտեմբերյան) քաղաքը հիմնադրվել է 1931 թ. հունիսի 26-ին, այն գտնվում է արարատյան դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում, մայրաքաղաքից 48 կմ հեռավորության վրա և համարվում է ՀՀ Արմավիրի մարզի կենտրոն: Արմավիրով են անցնում Երևան-Արմավիր-Թուրքիայի պետական սահման միջպետական, Արմավիր-Իսահակյան-Գյումրի հանրապետական նշանակության ավտոճանապարհները և Երևան-հյուսիսային կովկաս երկաթգիծը: Արմավիր քաղաքի գլխավոր հատակագիծը կազմվել է Ալ. Թամանյանի ղեկավարությամբ, վերջին հատակագիծը կազմվել է 2010թ: Քաղաքը զբաղեցնում է 2188 հա տարածություն, ծովի մակարդակից բարձրությունը կազմում է 840-860 մ: Քաղաքում գործում են հանրապետական ենթակայության մարզային կառույցներ, որոնք զբաղվում են էներգամատակարարման, գազամատակարարման, անվտանգության և օրինականության պահպանման, հարկային քաղաքականության, փոստային և հեռախոսային կապի, բուժապասարկման, սանիտարական հսկողության, ջրամատակարարման և այլ հարցերով: Արմավիրում առկա են արդյունաբերական և վերամշակող ձեռնարկություններ և արտադրական տարածքներ, որոնց վերագործարկումը կնպաստի քաղաքի զարգացմանը, սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը, կրթական և մշակութային կյանքի ակտիվացմանը, տուրիզմի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Արմավիր քաղաքում բնակվում է շուրջ 40.000 մարդ :

Համայնքի բնակչության թիվը կազմում է 37.489 մարդ տարիքային հետևյալ կազմով.

0-5 տարեկան-3079

6-17 տարեկան-5640

18-62 տարեկան-21635

63 և ավելի տարեկան -4715

Կենսաթոշակատուների թիվը - 5948 մարդ

Տարեց կենսաթոշակատուների թիվը 75 և ավելի – 1557 մարդ

Հաշմանդամների թիվը – 1694 մարդ

Հաշմանդամ երեխաների թիվը - 90 մարդ

Միակողմանի ծնողազուրկ երեխաների թիվը - 130

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը – 3 մարդ

Գործազուրկների թիվը - 3058 մարդ

Տնային տնտեսությունների թիվը – 10.046

Ընտանեկան նպաստի պետական համակարգում փաստագրված տնային տնտեսությունների թիվը - 874

Նպաստառու ընտանիքների թիվը - 699

Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի 2019թ. ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 928305,0հազար դրամ,

- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտները կազմում է 46,0 %

-Համայնքում առկա են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք կամ չեն գործում կամ գործում են իրենց երբեմնի արտադրական չնչին հզորություններով, դրանք են պահածոների գործարանը, ռելեի գործարանը, ֆուրնիտուրայի գործարանը, հաստոցաշինական գործարանը, հացի և հրուշակեղենի գործարանը, կահույքի ֆաբրիկան:

Հիմնականում գործում են Երևանի Արարատ կոնյակի գործարանի Արմավիրի մասնաձյուղը, Գազպրոմ Արմենիա Արմավիրի գազասարքավորումների գործարանը, Լայթս Մեթալս Ինդուստրիա ՍՊԸ, Արմավիրի Ե/Բ կոնստրուկցիաների գործարան ՍՊԸ, մասնավոր հատվածում գյուղմթերքների վերամշակման փոքր ծավալներով արտադրամասերը, կահույքի պատրաստման արտադրամասերը, հացի և հրուշակեղենի արտադրամասերը, որոնց արտադրանքը հիմնականում սպառվում է ներքին շուկայում և ԵՏՄ տարածքի երկրներում:

Համայնքում գործում են 9 հանրակրթական դպրոցներ, 2 տարածաշրջանային քոլեջներ, 12 մանկապարտեզներ՝ 1180 սաներով, 1 Արվեստի դպրոց, 1 Արվեստի Պետական քոլեջ, 1 երաժշտական դպրոց, 3 մարզադպրոց, գրադարանային համակարգ: Համայնքում գործում են 2 պետական բժշկական հաստատություն:

Արմավիրի Բժշկական Կենտրոնը նախատեսված 130+6 մահճակալով և Ամբուլատոր պոլիկլինիկական ծառայություն, բացի այդ մասնավոր հատվածում գործում են ախտորոշիչ ծառայություն մատուցող և ստոմատոլոգիական գործունեություն իրականացնող կենտրոններ:

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները.

Արմավիր քաղաքի 2019 թվականի բյուջեն եկամուտների գծով կազմում է 928305,0 հազ. դրամ, ծախսերի գծով 928305,0 հազ. դրամ:

Արմավիր քաղաքի 2018 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 919426,9 հազ. դրամ՝ ծրագրված 921878,6 հազ. դրամի փոխարեն կամ կատարողականը կազմել է 99,7 %, ընդ որում, Արմավիր քաղաքի 2018 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրավորված 855815,1 հազ. դրամի ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 854783,0 հազ. դրամ՝ ապահովելով 99,9 % կատարողական :

Արմավիր քաղաքի 2019 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվելու է 928305,0 հազար դրամի ծախսեր: 2018 թվականին փաստացի կատարված ծախսերի ծավալը կազմել է 806737,3 հազ. դրամով: Հավելուրդը կազմել է 112689,6 հազար դրամ: Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն գոյացել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Համայնքի 2018թ. Բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2019-2023թթ. Բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2018թ. Փաստ	2019թ. նախատ	2020թ. կանխ	2021թ. կանխ	հազարդրամ	
						2022թ. կանխ	2023թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	919426,9	928305.0	882073.0	896920.0	912319.0	927669.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	854783.0	868205.0	878073.0	892920.0	907819.0	922669.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	239320.9	249069.2	259459.0	273598.0	287652.0	301957.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	70963.8	73693.0	75000.0	76500.0	78000.0	79500.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	49756.5	52335.0	53000.0	54000.0	55000.0	56000.0
	Հողի հարկ	21207.3	21358.0	22000.0	22500.0	23000.0	23500.0
1.2	Գույքային հարկերայլ գույքից	123251.5	123494.0	130000.0	140000.0	150000.0	160000.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	123251.5	123494.0	130000.0	140000.0	150000.0	160000.0
1.3	Ապրանքների հոգսագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	16656.4	23082.2	25659.0	28298.0	30852.0	33657.0
	Տեղական տուրքեր	16656.4	23082.2	25659.0	28298.0	30852.0	33657.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտա	28449.2	28800.0	28800.0	28800.0	28800.0	28800.0

	դիրվճարներ						
	Պետական տուրքեր	28449.2	28800.0	28800.0	28800.0	28800.0	28800.0
1.5	Այլհարկային եկամուտներ						
	Այլհարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ						
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումներին ազատված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ						
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԲԱՄԱՇՆՈՐ ՀՆԵՐ	438092.0	438092.0	438092.0	438092.0	438092.0	438092.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական նորամաշնորհներ						
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական նորամաշնորհներ						
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական նորամաշնորհներ	438092.0	438092.0	438092.0	438092.0	438092.0	438092.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	434124.6	434124.6	434124.6	434124.6	434124.6	434124.6
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ						
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	3967.4	3967.4	3967.4	3967.4	3967.4	3967.4
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից քանակաչափային սերիալային սավորման նպատակով ստացվող պաշտոնական նորամաշնորհներ						
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական նորամաշնորհներ						
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական նորամաշնորհներ						
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	177370.1	181043.8	180522.0	181230.0	182075.0	182620.0
3.1	Տոկոսներ						
3.2	Շահաբաժիններ						
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	26033.8	29349.1	29502.0	29660.0	29955.0	30500.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	23508.9	26797.0	26943.0	27050.0	27255.0	27760.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ						
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականության ըստ կանոնի						

	ամասերիկառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ						
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	2524.9	2552.1	2560.0	2610.0	2700.0	2740.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներն ապրանքների և ստակարարումից նծառայությունների մատուցումից, այդ թվում	14346.8	14320.0	14320.0	14320.0	14320.0	14320.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների և կանաչման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	7293.0	7293.0	7293.0	7293.0	7293.0	7293.0
3.5.	Վարչական գանձումներ	134580.5	135834.7	136300.0	136850.0	137400.0	137400.0
	Տեղական վճարներ	131456.8	134834.7	135000.0	135500.0	136000.0	136000.0
	Համայնքի վարչական տարածքում միջնակամկատուցված ծեփերի, շինությունների օրինականացման համար վճարներ	3123.7	1000.0	1300.0	1350.0	1400.0	1400.0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների և մկատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ						
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	830.0	400.0	400.0	400.0	400.0	400.0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցներ ի կիրառումից եկամուտներ	830.0	400.0	400.0	400.0	400.0	400.0
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորություններ իջկատարման դիմաց գանձվող տույժերից						
3.7	Ընթացիկ տրյապաշտոնական նորամաշնորհներ						
3.8	Կապիտալ տրյապաշտոնական նորամաշնորհներ						
3.9	Այլ եկամուտներ*	1579.0	1140.0	0.0	0.0	0.0	0.0
	Համայնքի գույքի նպատակառաձվ մասների վրա հատուցումից մուտքեր						
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջեի կատարվող հատկացումներից մուտքեր						
	Օրենքով իրավականալլակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակալլեկամուտներ	1579.0	1140.0	0.0	0.0	0.0	0.0
II.	ՈԶ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	6580.4	3500,0	4000.0	4000,0	4500,0	5000.0

1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր						
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր						
	Շարժական գույքի իրացումից մուտքեր						
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր						
2.	Պաշարների իրացումից մուտքեր						
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր						
4.	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	6580.4	3500,0	4000.0	4000,0	4500,0	5000.0
	Հողի իրացումից մուտքեր	6580.4	3500,0	4000.0	4000,0	4500,0	5000.0
	Ոչ նյութական շարտադրված ակտիվների իրացումից մուտքեր						
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	58063.5	56600,0				
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)						
1.	ՓՈՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ						
1.1	Արժեթղթեր						
	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր						
	- հիմնական գումարի մարում						
1.2	Վարկեր						
	- վարկերի ստացում						
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում						
1.3	Փոխատվություններ						
	- բյուջետային փոխատվությունների ստացում						
	- ստացված փոխատվությունների գումարի մարում						
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	58063.5	56600,0				
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում անակցություն						
	- համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր						

	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդթվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր					
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում					
2.2	Փոխատվություններ					
	- նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր					
	- փոխատվությունների տրամադրում Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը					
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ միջոցները	58063,5	56600,0			
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս					
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս					
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում					
	որից՝ ծախսերի ֆինանսավորման ընդհանուր ծախսերից բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը					
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂՅՈՒՐՆԵՐ					
1.	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Արժեթղթեր					
	- թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր					
	- հիմնական գումարի մարում					
1.2	Վարկեր					
	- վարկերի ստացում					
	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում					
1.3	Փոխատվություններ					

	-փոխատվությունների ստացում						
	-Ստացված փոխատվությունների գումարի մարում						

ՀԶԲԾ-ում ընդգրկված 2018թ. բյուջեի կատարված ցուցանիշները և 2019-2023թթ. ծախսերի կանխատեսումը

Հ/հ	Ծրագրի անվանումը	2018թ փաստ	2019թ պլանավ	2020թ կանխ	2021թ կանխ	2022թ կանխ	2023թ կանխ
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	141781.9	186628.6	143363.0	155210.0	167109.0	179959,0
2	Ոռոգում	18126.0	24184.6	20300.0	20300.0	20300.0	20300.0
3	Ճանապարհային տրանսպորտ	16862.4	28561.0	30500.0	32000.0	34000.0	35000.0
4	Աղբահանում	97535.2	133313.8	130000.0	130000.0	130000.0	130000.0
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	3859,6	0.0	0.0	0.0	0.0	0.0
6	Զբամատակարարում	0.0	1500.0	1500.0	1500.0	1500.0	1500.0
7	Փողոցների լուսավորում	26140.9	30656.8	31500.0	32000.0	32500.0	33000.0
8	Բնակարանային շինություն և կոմունալ ծառ.	31206.8	3900.0	4440.0	4440.0	4440.0	4440.0
9	Գրադարաններ	21619.4	21389.4	21390.0	21390.0	21390.0	21390.0
10	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	18662.6	17744.9	17745.0	17745.0	17745.0	17745.0
11	Այլ մշակութային կազմակերպություններ	19613.6	13305.0	13305.0	13305.0	13305.0	13305.0
12	Նախադպրոցական կրթություն	288135.1	321472.2	321472.0	321472.0	321472.0	321472.0
13	Արտադպրոցական դաստիարակություն	114245.0	127718.1	127718.0	127718.0	127718.0	127718.0
14	Սոց ապահովություն	8948,8	7840,0	7840,0	7840,0	7840,0	7840,0
15	Պահուստային ֆոնդ	0,0	10090,6	11000.0	12000.0	13000.0	14000.0
	Ընդամենը	806737,3	928305.0	882073.0	896920.0	912319.0	927669.0

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը:

Այդ նպատակով Արմավիրի քաղաքապետարանի պաշտոնական կայքում թարմացման ռեժիմով գործում է Արմավիր քաղաքի տարեկան ինտերակտիվ բյուջեն, որը հնարավորություն է ընձեռում առցանց տեղեկացված լինել քաղաքային տնտեսության ֆինանսական շրջանառության մասին:

Արդեն իսկ կայացվել է բյուջեի վերաբերյալ հանրային քննարկումների, բաց լսումների ինստիտուտը:

Համայնքի զարգացման խոչընդոտները և դժվարությունները

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից է գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը: Այս ոլորտում առկա են մի շարք խոչընդոտող գործոններ, որոնք պայմանավորված են բանկերի՝ ձեռնարկատիրության նպատակով տրամադրվող վարկային քաղաքականության հետ: Դժվարություններ կան արտադրանքի իրացման հատկապես արտաքին շուկա արտահանման գործում, հարկային քաղաքականության հետ կապված արտոնությունների սահմանման հետ: Դժվարություններ կան համայնք-գործարար փոխհարաբերություններում պայմանավորված մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, ինչպես նաև համայնքի սեփականություն համարվող գույքի օգտագործման և ենթակառուցվածքներից օգտվելիս առաջացած խնդիրների հետ:

Համայնքի զարգացման հիմնական խոչընդոտներից է համայնքի գույքի ոչ նպատակային և արդյունավետ կառավարումը:

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ցանկում են ներառված նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների զբաղեցրած շենքերը և շինությունները իրենց զբաղեցրած տարածքները և օժանդակ շինությունները, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից զբաղեցրած շենքերը և տարածքները, որոնց մեծ մասը տարիների ընթացքում ոչ ճիշտ շահագործման և վերանորոգման աշխատանքների բացակայության պատճառով ունեն հիմնանորոգման, որոշակի դեպքերում ուժեղացման կարիք, ունեն վթարային շենքի կարգավիճակ: Կան առանձին շենքեր, որոնց պահաման և ուժեղացման նպատակահարմարությունը որոշելու համար անհրաժեշտ է մասնագիտական, ֆինանսատնտեսագիտական հաշվարկ կատարել: 12 նախադպրոցական ուսումնական հաստատություններից 3-ն են հիմնորոգված և ջեռուցվում են, որոնցից 2-ը հիմնանորոգված են ոչ ամբողջական, մնացած 9 մանկապարտեզները ունեն ուժեղացման, հիմնանորոգման և ջեռուցման համակարգերի կառուցման, զազաֆիկացման անհրաժեշտություն:

Համայնքային ենթակառուցվածքները՝ ճանապարհները, ոռոգման համակարգերը, փողոցային լուսավորության և ճանապարհային երթևեկության կարգավորման կառուցվածքները և ճանապարհային նշանները, ջրահեռացման համակարգերը գտնվում են ոչ բավարար վիճակում, մասնավորապես համայնքային ճանապարհները առնվազն վերջին 30 տարիների ընթացքում չենթարկվելով անհրաժեշտ տեսակի և ծավալի նորոգման, բաց են թողել նորմատիվային նորոգման ժամկետները, որի արդյունքում ճանապարհների մոտ 70%-ը դարձել են անանցանելի և կարիք ունեն հիմնանորոգման և փոսային ընթացիկ նորոգումները տնտեսապես արդարացված չեն:

Համայնքի բնակելի 107, 108, 109 և 110 թաղամասերում ամբողջովին բացակայում են ասֆալտապատ փողոցները, որը իր հերթին դժվարացնում է քաղաքացիների ազատ տեղաշարժը, հասարակական տրանսպորտի ապահովվածությանը և երթուղիների տրամադրման մրցույթների անցկացմանը:

Համայնքի ոռոգելի տարածքների ոռոգումը իրականացվում է հիմնականում խորքային հորերից մեխանիկական եղանակով արտադրված ջրով, ոռոգման փակ և բաց ցանցերի միջոցով, որը ոչ մի տեսակի անհրաժեշտ լուրջ վերանորոգման և արդիականացման չի ենթարկվել, առանձին տարածքներ և նույնիսկ թաղամասեր չեն ոռոգվում ներքին ցանցի բացակայության պատճառով: Խորքային հորերը վերազինման և նորոգման կարիք ունեն: Համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ նշանակության մոտ 350 հա արոտ տեսակի հողեր չեն մշակվում ոռոգման համակարգի բացակայության պատճառով:

Փողոցային գիշերային լուսավորության համակարգը ամբողջովին չէ, համակարգը չի ընդգրկում քաղաքի ամբողջ տարածքը, ինչպես նաև ժամանակակից էներգախնայող չէ, որը իր հերթին բերում է լրացուցիչ ծախսերի մեծացմանը, շահագործվող և սպասարկման համար տրամադրվող գումարների ավելացմանը:

Մեծ են խնդիրները պայմանավորված ճանապարհային անվտանգ երթևեկության կազմակերպման գործում, կապված համայնքի երթևեկության սխեմայի բացակայության, այդ սխեմայի ճանապարհային նշաններով և լուսացույցային սարքավորումներով ապահովման, գծանշման բացակայության հետ:

Անմխիթար վիճակում են գտնվում ջրահեռացման համակարգը, որը հիմնականում իրականացվում է բաց եղանակով՝ կողային առուներով:

Փակ դրենաժային համակարգով իրականացվում է միայն Երևանյան փողոցի ջրահեռացումը, որը գործում է մասամբ: Անձրևների ժամանակ չկազմակերպված ջրահեռացումը հիմնականում խնդիրներ է առաջացնում բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքներում բարձրացնելով աղետների ռիսկայնությունը:

Նախադպրոցական կրթության կազմակերպման բնագավառում գոյություն ունեցող խնդիրները հիմնականում պայմանավորված են շենքերի ոչ բավարար վիճակով, ջեռուցման համակարգերի բացակայությամբ, անհրաժեշտ գույքի բացակայությամբ, ֆիզիկապես և բարոյապես մաշվածությամբ, ապահովված չեն կրթական հաստատությունների մատչելիությունը և ներառականությունը, ներդրված չէ նախադպրոցական տարիքի երեխաների էլեկտոնային հերթագրման գործընթացը այն դարձնելով թափանցիկ և հասանելի առցանց տիրույթում:

Մշակույթի բնագավառի խնդիրների շարքում անհրաժեշտ է նշել Արվեստի և Երաժշտական դպրոցներում հասանելիության խթանման համապարփակ ծրագրերի բացակայությունը, համայնքային գրադարանների անբավարար վիճակը, որոնք համալրված չեն արդիական գրքային ֆոնդով, համապատասխան գույքով և տարածքներով, բացակայում է ջեռուցումը:

Համայնքում մշակութային կենտրոնի բացակայության պատճառով ստեղծագործողները զրկված են ցուցահանդեսներ, համերգներ և այլ մշակութային միջոցառումներ կազմակերպելու հնարավորություններից:

Մասնավոր ներդրումային ծրագրերի բացակայության պատճառով Քաղաքային զբոսայգում չեն իրականացվում այգու գործառույթներին բնորոշ գործընթացներ՝ մանկական խաղեր, բացօթյա միջոցառումներ կազմակերպելու տաղավարներ և ժամանակավոր այլ կառույցվածքներ:

Մոցիալական պաշտպանության բնագավառում խնդիրները կապված են հիմնականում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների հայտնաբերման լիարժեք

մեխանիզմների և գործընթացների բացակայության կամ մասամբ լինելու, այդ մարդկանց և ընտանիքներին սոցիալական կարիքների բավարարման մեխանիզմների և նպատակայնության հետ:

Սոցիալական պաշտպանության բնագավառում աշխատանքների ցածր արդյունավետությունը պայմանավորված է կիրառվող մեխանիզմների ոչ լիարժեք լինելու և համայնքում սոցիալական աշխատողի ինստիտուտի բացակայությամբ:

Համայնքում առկա են համայնքային սեփականություն համարվող կիսակառույց բազմաբնակարան շենքեր, որոնք չենթարկվելով կոնսերվացման միջոցառումների ունեն վթարային տարբեր աստիճաններ: Առկա են նաև կոռուպցիայի սեփականություն հանդիսացող բազմաբնակարանային շենքեր, որոնք գտնվում են նույն կարգավիճակում:

Համայնքում անհատական բնակելի շինարարությանը խոչընդոտում են կոմունալ ենթակառուցվածքների բացակայությունը կամ անբավարար վիճակը և հիփոթեքային վարկավորման բնագավառի անհասանելիությունը:

Համայնքի կառուցապատումը իրականացվում է համայնքի 2010 թվականին հաստատված գլխավոր հատակագծի պահանջներով:

Կոմունալ տնտեսության, բարեկարգման, կանաչապատման, սանիտարական մաքրման, գերեզմանատների պահպանման և շահագործման բնագավառում առկա են մի շարք խնդիրներ և խոչընդոտներ՝ մասնավորապես կանաչապատ տարածքների պահպանման և ընդլայնման համար խոչընդոտներ են հանդիսանում ոռոգման բաց և փակ համակարգերի բացակայությունը, աղբահանությունը իրականացվում է աղբարկղներից աղբատար մեքենաներով և շրջիկ մեքենաներով, որոնք գտնվում են տեխնիկապես և բարոյապես մաշված վիճակում, սանիտարական մաքրումը իրականացվում է բացառապես ձեռքի աշխատանքի միջոցով և քաղաքի տարածքի շատ փոքր հատվածում, գերեզմանատունը մասնակի է ցանկապատված, ներքին ճանապարհները անմխիթար վիճակում են, մեծ մասում բացակայում են ոռոգման ջրագծերը:

Հասարակական տրանսպորտով ապահովված են քաղաքի ոչ բոլոր փողոցները և թաղամասերը, կապված հիմնկանում ճանապարհների անբարեկարգ վիճակով և ուղևորահոսքի անբավարար չափով:

Աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքապաշտպանության միջոցառումների իրականացման ոլորտներում խնդիրները պայմանավորված են հակաճառագայթային թաքստոցների, ապաստարանների բացակայությամբ, դրանց ոչ բարվոք կահավորվածությամբ, պաշտպանական միջոցների բացակայությամբ, անհրաժեշտ վթարավերականգնողական տեխնիկաների բացակայությամբ կամ ոչ սարքին վիճակով:

Արմավիր քաղաքը գտնվում է Հաէկ 10 կմ զոնայում, որը պահանջում է լրացուցիչ հավելյալ միջոցների անհրաժեշտություն:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում խնդիրները պայմանավորված են հանրային կանաչ և ջրային տարածքների սակավությամբ, բակային տարածքներում խաղահրապարակների

և մարզասարքների բացակայությամբ, քաղաքի տարածքում ձևավորված աղբավայրերով և դրանց վերահսկման մեխանիզմների բացակայությամբ:

Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր

- Համայնքի աշխարհագրական լավ դիրքը, մոտիկությունը մայրաքաղաք Երևանին
- Համայնքի բարենպաստ կլիման
- Համայնքում առկա արտադրական հզորությունների և այլ հնարավորությունների առկայություն
- Համայնքի ապահովվածությունը շուրջօրյա ջրամատակարարմամբ, գազով, ոռոգման ջրով
- Համայնքին հարակից գյուղական բնակավայրերը, որտեղ արտադրվում են գյուղատնտեսական ապրանքներ
- Համայնքում առկա բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ կադրեր

Համայնքի թույլ կողմերը

- Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների վատ վիճակը (ճանապարհներ, արտաքին լուսավորության ցանց, անձրևատար կոյուղու բացակայություն)
- Նախադպրոցական հիմնարկների, շենքային, գույքային, ջեռուցման համակարգի ոչ բավարար վիճակը
- Համայնքում գոյացած աղբի վերամշակման բացակայություն
- Համայնքի ոռոգման համակարգի անբավարար վիճակը
- Համայնքի բնակչության զբաղվածության մակարդակը
- Աղետների ռիսկերին դիմագրավելու կարողության ցածր մակարդակ

Արմավիր քաղաքի 2019-2023 թթ զարգացման գերակայությունները

1. Արմավիրի տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովում
2. Արմավիր քաղաքի կենտրոնի բեռնաթափման նպատակով ճանապարհների նորոգման և անհատական բնակելի թաղամասերը կենտրոններին կապող ճանապարհների ասֆալտապատման ծրագրերի իրականացում
3. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգիանայող համակարգերի ներդրում և հուսալիության բարձրացում
4. Քաղաքի աղբավայրի կառավարման, թափոնների տեղադրման և մեկուսացման աշխատանքների իրականացում
5. Շենքերի բակային տարածքների բարեկարգում
6. Բնակելի շենքերի տանիքների պահպանություն և հիմնանորոգման ծրագրերի իրականացում
7. Բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացում և բնակիչների անվտանգության ապահովման ծրագրերի իրականացում

8. Հանգստի գոտիների ստեղծում, բարեկարգում և կանաչապատման իրականացում
9. Անհատական բնակելի թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծում
10. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում
11. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում
12. Բնակիչների սոցիալական պաշտպանության ապահովում և այս նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված ծրագրերի իրագործում:
13. Բնակչության անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովում
14. Կառավարման համակարգի բարեփոխումների և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովում և բնակչի հետ հետադարձ կապի ակտիվացում
15. Քաղաքապետարանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում
16. Քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացում, լավագույն փորձի ուսումնասիրում և կիրառում:

Արմավիրի 2019-ից 2023 թվականների զարգացման ոլորտային ծրագրեր

Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Քաղաքի զարգացման դիմագիծն ու այցեքարտը քաղաքաշինությունն է: Քաղաքաշինական ծրագրերն են, որ ձևավորում են քաղաքային միջավայր և փոխում մարդկանց առօրյա կյանքն ու ապրելակերպը: Քաղաքաշինական ծրագրերի իրականացման հիմքում լինելու է քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթները:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Արմավիր քաղաքի մինչև 2023 թվականը քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում:
2. Համայնքային նշանակության ճանապարհափողոցային ցանցի ընդլայնում, վերանորոգում, հիմնանորոգում, դրանց երկայնքով անցնող ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցում, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացում:
3. Գլխավոր հատակագծի իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացում, համապատասխան ծրագրերի, գոտիավորման նախագծերի մշակում:
4. Բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտական աշխատանքների իրականացում և ուժեղացման աշխատանքների ծրագրերի կազմակերպում:
5. Նոր այգիների և հանգստի գոտիների հիմնադրում, զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում:

6. Քաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման և շենքերի արտաքին տեսքի կարգաբերման շարունակական ծրագրերի իրականացման ապահովում:

7. Քաղաքաշինական միջավայրում հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովմանն ուղղված նախագծերի մշակում և հետևողականորեն դրանց իրականացում:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔ - ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ:

Ծրագրի նպատակը՝

Քաղաքի կառուցապատման ընդլայնում, ամբողջականացում և արդիականացում, նոր այգիների և հանգստի գոտիների հիմնադրում, կանաչ տարածքների վերականգնում, ժամանցի կենտրոնների ստեղծում, բնակելի ֆոնդի և հասարակական նշանակության օբյեկտների և բնակելի նշանակության շենքերի կառուցում, ենթակառուցյունների ընդլայնում, ներդրումների խթանում:

Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

1. Արմավիր քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված Մարշալ Բաղրամյանի անվան պուրակի և քաղաքային 2-րդ զբոսայգու և հարակից տարածքների կառուցապատում, ջրային նոր տարածքների հիմնում, ենթակառուցյունների կառուցում:

2. Քաղաքային այգում բացօթյա ժամանցի համերգների և այլ միջոցառումների համար նախատեսված կառույցների ստեղծում, մանկական ատրակցիոնների կառուցում:

2. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՑՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը՝

Ստեղծել անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց և տրանսպորտային համակարգ, կենտրոնի բեռնաթափում:

Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

Ծրագրով նախատեսվում է կազմակերպել և իրականացնել գոյություն ունեցող ասֆալտապատ փողոցների պահպանությունը, նորոգումը և հիմնանորոգումը: Ծրագրով նախատեսվում է նաև ժամանակակից էներգախնայող լուսավորության ցանցի կառուցում, փողոցների կահավորում, համապատասխան ճանապարհային նշաններով, տրանսպորտային լուսացուցային օբյեկտներով և գծանշումներով, ինչպես նաև դրանց տեղադրությունը ապահովող երթևեկության սխեմայի ձևաչափերով:

Ծրագիրը ընդգրկում է քաղաքի առավել ինտենսիվ երթևեկությամբ փողոցները:

Շինարարություն էվ բարեկարգում՝

Արմավիր քաղաքի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 89.6կմ, Արմավիր քաղաքում առկա են շուրջ 42 փողոցներ, իսկ փողոցների, հրապարակների, մայթերի, բակային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 1901400.0 քմ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝

1. Հանայնքային նշանակության փողոցների պատշաճ որակի ապահովում
2. Փողոցների բարեկարգում և հիմնանորոգում
3. Հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում
4. Մայթերի վերանորոգում
5. Բակերի բարեկարգում
6. Գործող այգիների բարեկարգում
7. Շենքերի ճակատային մասերի մաքրում

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Բակերի բարեկարգում՝ ներառյալ խաղահրապարակների կառուցում

Ծրագրի նպատակը՝

Բակերի բարեկարգում, երիտասարդ սերնդի ակտիվ հանգստի կազմակերպում

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև խաղահրապարակների կառուցմանը, տեղադրել բակային հանգստի կահավորանք՝ ապահովել դրանց պահպանումն ու անվտանգությունը:

2.Նախադպրոցական Հաստատությունների Հիմնանորոգում

Ծրագրի նպատակը

Արմավիր քաղաքի մանկապարտեզների պատշաճ վիճակի և հարմարավետության նախադպրոցական կրթության համար նախատեսվող պայմանների ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ամբողջական կերպով հիմնանորոգել մանկապարտեզների շենքերը, թարմացնել կահույքն ու կենցաղային գույքը: Կառուցել գազամատակարարման և ջեռուցման համակարգերը:

3.Ջրային կառույցների կառուցում, շահագործում և պահպանում

Ծրագրի նպատակը

Արմավիր քաղաքի արտաքին տեսքի բարելավում, հանգստի գոտիներում զովության պահպանում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է քաղաքի կենտրոնական հրապարակի շատրվանների վերակառուցման ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ, նոր շատրվանի կառուցում Արցախյան ազատամարտում զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հուշարձանի մերձակա տարածքում: Կիրականացվի նաև ցայտաղբյուրների կառուցում:

4.Արմավիր քաղաքի փողոցներում աղբամանների հարմարեցված հարթակների կառուցում

Ծրագրի նպատակ

Փողոցների պատշաճ վիճակի, աղբահանության ծառայության մատուցման, բնակչության և փողոցային երթևեկության անվտանգության ապահովում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է քաղաքի փողոցների մայրերին տեղադրված աղբարկղների թվի ավելացում, ինչպես նաև աղբամանների տեղադրման համար հարմարեցված հարթակների կառուցում:

Անշարժ գույքի կառավարում

Արմավիր քաղաքի վարչական տարածքը 01.07.2018 թվականի դրությամբ կազմում է 2181.99հա Որից

- Պետական սեփականության հողեր` 241.09 հա
- Համայնքային սեփականության հողեր` 841.96 հա
- Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփական հողեր 925.02 հա /170.36 հա

Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդը` ըստ նպատակային նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի:

Ջրային հողեր- 19.38 հա

Անտառային տարածքներ- 0

Հատուկ նշանակության- 123.81 հա

Հատուկ պահպանվող տարածքներ- 110.26 հա

Էներգետիկ, տրանսպորտի կապի և կոմունալ-53.55 հա

Արդյունաբերական ընդերք-օգտագործման և այլ- 166.42 հա

Բնակավայրերի հողեր- 851.55 հա

Գյուղատնտեսական նշանակության հողեր- 848.02 հա

Համայնքի տարածքում գտնվող շենքերի ու շինությունների կառավարման գործընթացը ներառում է դեպքեր, երբ դրանք իրենց գործառական նշանակությամբ չեն օգտագործվում, ինչը ունի հստակեցման կարիք: Նշվածը հնարավորություն կտա գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ գույքահարկի և / կամ վարձավճարի չափերը՝ համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:

Արմավիր քաղաքում առկա են խորհրդային ժամանակներից քաղաքացիների կողմից զբաղեցրած, սակայն մինչև օրս չմասնավորեցված բնակարաններ: Առկա են համայնքի սեփականությունը համարվող գույքեր, որոնք դեռ չունեն իրավունքների պետական գրանցում:

Առկա են դեպքեր, երբ հողամասերի գործառական և / կամ նպատակային նշանակությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և ունեն հստակեցման կարիք:

Հիմնախնդիրներ՝

1. Չհասցեավորված շենք-շինությունների և հողամասերի հասցեավորում
2. Տնամերձ և բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում
3. Համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների և հողամասերի վարձակալության դրույքաչափերի համապատասխանեցում ավագանու կողմից սահմանված չափերին:
4. Համայնքի սեփականություն համարվող գույքի կազմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող գույքի մասնավորեցման գործընթացի իրականացում:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր՝

Նախատեսվում է իրականացնել հողային հաշվեկշռի կազմման և անշարժ գույքի օտարման տարեկան ծրագրի մշակման և դրա հիման վրա իրականացնել քաղաքի զարգացման նպատակով ներդրումների ներգրավմանն ուղղված համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներ:

1. Շենքերի և շինությունների կառավարում

Ծրագրի նպատակ՝

Ծրագրի նպատակն է իրականացնել համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների արդյունավետ կառավարում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

1. Համայնքի սեփականություն համարվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքների կազմակերպում:
2. Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն համարվող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում:
3. Համայնքի սեփականություն համարվող գույքի կողմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող, ինչպես նաև ոչ լիարժեք մասնակի շահագործվող գույքի մասնավորեցման գործընթացի իրականացում:
4. Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող շենքերի և շինությունների գործառական նշանակությունների համապատասխանեցում փաստացի օգտագործմանը:
5. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառավարման ամենամյա ծրագրերի մշակում:

Հողերի հետ կապված հարաբերությունների կառավարում

Ծրագրի նպատակը՝

Ծրագրի նպատակն է կարգավորել հողերի հետ հարաբերությունները:

Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

Ծրագիրը ներառում է՝

1. Իրավունքներ չձևակերպած, սակայն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման գույքագրման , դրանց նկատմամբ իրավունքների վերականգնման և ձևակերպման գործառույթ:
2. Համայնքի տարածքում տնամերձ բնակչինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում:
3. Նախկինում կնքված հողամասերի, շինությունների վարձակալության պայմանագրերի ժամկետների և դրույքաչափերի վերանայում և վարձավճարների համապատասխանեցում ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան:
4. Համապատասխան իրավական ակտերի միջոցով նախատեսվում է հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:
5. Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա ծրագրերի մշակում:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Արմավիր քաղաքում գործում են առևտրի 350 օբյեկտ, սպառողական ապրանքների 76, գյուղատնտեսական արտադրանքի 100, գյուղմթերքի 2 շուկաներ, առևտրի կենտրոն 3, հանրային սննդի 30, կենցաղային ծառայություններ մատուցող 40 օբյեկտներ:

Չնայած քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելմանը՝ դեռևս այն կանոնակարգման կարիք ունի:

Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտները:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Առևտրի և սպասարկումների մասին ՀՀ օրենքով, ՏԻՄ օրենքով, համայնքին վերապահված լիազորություններին համակարգված և հետևողական իրականացում:
2. Օրենսդրության համապատասխան բացօթյա առևտրի պատշաճ կազմակերպում և ապօրինի առևտրի արգելում և կանխարգելում:
3. Համայնքի փողոցներին տեղակայված կրպակների, տաղավարների և շինանյութի վաճառքի կետերի արդիականացում, առևտրի կանոնների պահանջներին համապատասխանեցում:
4. Առևտրի օբյեկտներից դուրս ապրանքների ցուցադրումն արգելելու ուղղությամբ հսկողության խստացման անհրաժեշտություն:

2019-2023 նախատեսվող ծրագրեր

1. Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում:
Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում
Ծրագրի նպատակը՝
Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն

Ծրագրի համառոտ նկարագրություն

Բացօթյա ապօրինի առևտուրը բերում է բազմաթիվ բացասական հետևանքներ: Առաջին հերթին վտանգվում է սպառողների առողջությունը: Արևի, անձրևի ու ձյան ազդեցության, փոշու և մեքենաների առտանետումների հետևանքով գյուղմթերքները արագ որակազրկվում են, քիմիական պրոցեսների հետևանքով դրանցում առաջանում են թունավոր նյութեր և սպառնում մարդկանց առողջությանը: Բացօթյա ապօրինի առևտուրը առաջացնում է նաև փողոցներում հակասանիտարական վիճակ, խոչընդոտում հետիոտնի և տրանսպորտի երթևեկին: Առևտրի գործունեությունից առաջացած աղմուկի հետևանքով խանգարվում է մարդկանց հանգիստն ու անդորրը՝ առաջացնելով դժգոհություններ: Առևտուրը իրականացնելու համար՝ անհրաժեշտ զանազան պարագաների հետևանքով աղճատվում է քաղաքի տեսքը՝ ստեղծելով գեղազիտական տեսանկյունից ոչ հաճելի պատկեր:

Ուստի օրենսդրական պահանջներն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով առաջիկա 5 տարիների ընթացքում միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ուղղությամբ:

2. Արմավիր քաղաքում չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժում, ինչպես նաև առևտրի , առանձին օբյեկտների ու շինանյութի վաճառքի կետերի արդիականացում:

Ծրագրի նպատակը՝
Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Չնայած տաղավարների արդիականացումը կրում է շարունակական բնույթ, սակայն դեռևս ապամոնտաժման և արդիականացման կարիք ունեն դրանց մի մասը: Առաջնահերթությունը կտրվի գազոններում և մայթերի վրա տեղադրված տաղավարներին:

Հետևողական աշխատանքներ կկատարվեն հատկապես սեփականաշնորհված տարածքներում շինանյութերի վաճառքի և ավտոմեքենաների կազմաքանդման կետերի պարտադիր պարսպապատման, սանիտարական նորմերի և կանոնների պահպանման և շրջակա միջավայրի աղտոտման դեպքերի բացառման ուղղությամբ:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արմավիր քաղաքում առկա են թվով 137 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնք չեն կառավարվում համատիրությունների և լիազորագրային կառավարիչների կողմից: Առկա բոլոր խնդիրները, որոնք պահանջում են հրատապ լուծում կամ չեն լուծվում, կամ լուծվում են մասամբ քաղաքապետարանի սուղ հնարավորության սահմաններում և աջակցությամբ:

Ոլորտում առկա խնդիրների կարգավորման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված <<բազմաբնակարան շենքերի կառավարման մասին >> ՀՀ օրենքի նոր նախագծի պահանջներով:

Հիմնախնդիրներ՝

1. Թեք տանիքների հիմնանորոգում
2. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ստեղծում
3. Աղբավայրի կառավարման անհրաժեշտություն, գոյություն ունեցող աղբի կոնսերվացում:

Կոշտ թափոնների կառավարում՝

Արմավիր քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, մայթերի ընդհանուր մակերեսը կազմում է 73950.0 քմ: Քաղաքի տարածքից օրական հավաքվում և աղբավայր է տեղափոխվում 32.0 տ. աղբ:

Քաղաքի աղբահանության և սանմաքրման աշխատանքները իրականացվում են <<Բարեկարգում >> տնօրինության կողմից:

Մշակվել են աղբահանության և սանիտարական մաքրման սխեմաները:

Պարբերաբար նորացվում և ձեռք են բերվում անհրաժեշտ քանակի աղբարկղներ:

Աղբավայրը գտնվում է քաղաքի հյուսիս-արևելյան մասում 1.3 կմ հեռավորության վրա, որտեղ տարեկան տեղափոխվում է 9216.0տ. կենցաղային աղբ: Այն զբաղեցնում է մոտ 8հա տարածք:

Այն ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել որևէ ընդունված ստանդարտով՝ որպես աղբավայր, չի համապատասխանում տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր:

2019-2023թթ. Նախատեսվող ծրագրեր

1. Օգտագործելով օրենսդրական փոփոխությունների ընձեռած հնարավորությունները՝ ստեղծել նոր մոդելի համատիրություններ, որոնք հնարավորություն կտան համայնքի մասնակցային ներդրումային ծրագրերի միջոցով իրականացնել տարիներ շարունակ բազմաբնակարան շենքերում կուտակված պրոբլեմների փուլային լուծումը:

2. Ապահովել աղբահանության և սանմաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավումը:

Ավելացնել հանրային տարածքների զուգարանների թիվը:

ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Ծրագրի նպատակը՝

Ընդլայնել արտաքին լուսավորության ցանցը՝ ապահովելով փողոցների, բակային տարածքների և հանրային տարածքների արտաքին լուսավորությունը, արդիականացնել քաղաքային լուսավորության համակարգը, բարձրացնել կառավարման արդյունավետությունը:

Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

Քաղաքային լուսավորության ցանցի արդիականացման նպատակով նախատեսվում է լուսատուների փոխարինում LED լուսատուներով, փոխարինել վթարային հենասյուները: Ավելացնել լուսավորության տևողությունը:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և նորոգման աշխատանքներ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են թվով 12 նախադպրոցական կրթության հաստատություններ, որտեղ երեխաների ցուցակային թիվը կազմում է 1150: Քաղաքում գործում են նաև ոչ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Մանկապարտեզները գործում են տարեկան 9 ամսյա կտրվածքով: Միայն թվով 3 մանկապարտեզներում է գործում ջեռուցման համակարգեր, մնացած 9-ում ջեռուցումը իրականացվում է փայտի վառարանների միջոցով: Մասնակի և հիմնովին վերանորոգված են 3-ը: Սոցիալապես անապահով և ծնողազուրկ շուրջ 20 երեխաների նախադպրոցական կրթությունը կազմակերպվում է գիշերակացով:

2019-2023թթ. Նախատեսվող ծրագրեր`

1. Նախադպրոցական կրթության մատչելիություն

Ծրագրի նպատակը`

Ծրագրի նպատակը նախադպրոցական կրթության մատչելիությունն է, երեխաների սահուն անցումը դպրոց` մեկնարկային հավասար պայմանների ապահովմամբ: Երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը նախադպրոցական կրթության հիմնական նպատակներից են:

Ծրագրի համառոտ նկարագրությունը`

1. Նախատեսվում է մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում, կահույքի և կենցաղային գույքի թարմացում:
2. Ջեռուցման և գազաֆիկացման համակարգերի կառուցում
3. Մանկապարտեզների ընդունելության էլեկտրոնային առցանց հերթագրման եղանակի ներդրում
4. Մանկապարտեզների վարձակալության տրված տարածքները աստիճանաբար մանկապարտեզներին վերադարձնելու գործընթացի ապահովում
5. Նախատեսել ներառական կրթություն իրականացնել մանկապարտեզների առկայության ապահովում

Սոցիալական ապահովության բնագավառում Արմավիրի քաղաքապետարանի ռազմավարությունը ուղղված է լինելու քաղաքացիների սոցիալական ռիսկի խմբերի սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ռիսկի աստիճանական կրճատմանը, հաշմանդամության ոլորտում իրականացվող աշխատանքները միտված են լինելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ապահովմանը, տարեցների տեղահանվածների, անօթևանների, ազատազրկման վայրերից, ազատվածների իրավունքների պաշտպանությանը:

2019-2023թթ. Նախատեսվող ծրագրեր

1.Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն

Ծրագրի նպատակը՝

Աջակցել կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքներին, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, բազմազավակ ընտանիքներին, պատերազմի վետերաններին, աղքատ ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, տարեցներին, հաշմանդամներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և անօթևան անձանց:

Ծրագրի համառոտ նկարագիրը՝

Սոցիալական ապահովության ոլորտում Արմավիրի քաղաքապետարանի կարևորագույն խնդիրն է սոցիալական խավերի համար իրականացվող միջոցառումները, որոնք միտված են քաղաքացիների սոցիալական վիճակի բարելավմանը:

Սոցիալական աջակցությունները կդառնան ավելի նպատակային, համակարգային և հասցեական, տոների հիշատակերի օրերի կապակցությամբ աջակցությանը՝ մասնավորապես մարտի 8, ապրիլի 7, ապրիլի 24, մայիսի 9, հոկտեմբերի 1, (Տարեցների օր, 100 և ավելի տարիք ունեցող), դեկտեմբերի 3(Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր)

2. Սոցիալապես անապահով արմավիրաբնակ ծնողների համար զինվոր որդիներին տեսակցության կազմակերպում:

Ծրագրի նպատակը՝

Աջակցություն սոցիալապես անապահով արմավիրաբնակ ծնողներին, ովքեր ունեն սահմանամերձ գոտիներում ծառայող որդիներ:

Ծրագրի համառոտ նկարագիրը՝

Ծրագրով նախատեսվում է կազմակերպել սոցիալապես անապահով արմավիրաբնակ ծնողների այցելությունը սահմանամերձ գոտիների՝ Տավուշի, Սյունիքի, Լեռնային Ղարաբաղի գորամասերում ծառայող իրենց զինվոր որդիներին:

3.Սոցիալապես անապահով անձանց աջակցություն

Ծրագրի նպատակը՝

Աջակցել ռիսկային իրավիճակում հայտնված սոցիալապես խոցելի մարդկանց և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվածներին:

Ծրագրի համառոտ նկարագիրը՝

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է սոցիալական ծանր պայմաններում գտնվող անձանց դրամական աջակցության տրամադրում:

4. Հասարակական կազմակերպություններին աջակցություն

Ծրագրի նպատակը՝

Նպատակն է սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում ոչ պետական և առևտրային կազմակերպությունների մասնակցության ձևերի ընդլայնումը:

Հասարակության մեջ հաշմանդամների լիարժեք ինտեգրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Հաշվի առնելով ՀԿ-ների մարդկանց աջակցելու փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ կիրականացվեն սոցիալական ծրագրեր:

Ընտանեկան բոնության ենթարկված անձանց համար համագործակցելով ՀԿ-ների հետ կտրամադրվի մասնագիտական խորհրդատվություն լուծումների վերաբերյալ:

5.Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հաշվառման իրականացում, անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում

Ծրագրի նպատակ՝

Ծրագրի արդյունքում նախատեսվում է կարիքավոր ընտանիքների բնակարանային խնդիրների աստիճանական կարգավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

ՀՀ կառավարության 10.09.2015թ. թիվ 1069-Ն որոշմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հաշվառման աշխատանքների իրականացում: Քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց սոցիալական աջակցության և սոցիալական ներառման խնդիրների կազմակերպում:

6.Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում

Ծրագրի նպատակ՝

Ծրագրի նպատակն է կազմակերպել սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգիստը:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգիստի կազմակերպումը մանկական ճամբարներում: Ծրագիրն ուղղված է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողագուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

1.Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

Ծրագրի նպատակ՝

Արտադպրոցական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Ծրագրի շրջանակում նախապատրաստվում է առողջ ապրելակերպի արմատավորում ու ֆիզիկական դաստիարակության ապահովում, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ սերնդի դաստիարակում, մարզական ընդունակությունների կատարելագործում, մարզիկ մարզուհիների նախապատրաստում համապատասխան ԲՈՒՀ-երում ուսումը շարունակելու, Հայաստանի հավաքական թիմերի համար բարձրակարգ մարզիկների նախապատրաստում, ֆիզիկական-առողջարարական միջոցառումներին օժանդակում:

Սպորտային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ՝

Առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական զարգացման իրականացում, տարբեր մարզաձևերի մասսայականացում և զարգացում, ուժեղագույն թիմերի և մարզիկների ի հայտ բերում:

Ծրագրի նկարագրություն՝

Արմավիր քաղաքի առաջնությունների կազմակերպում

ՀՀ առաջնություններին, տեղական և միջազգային մրցաշարերին թիմերի մասնակցության ապահովում, ուսումնամարզական հավաքների մասնակցություն՝ հանրապետական և միջազգային, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկների խրախուսում:

3.Արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգում, գույքի ձեռքբերում

Ծրագրի նպատակ՝

Մարզական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում, գործունեության արդյունավետության բարձրացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Ծրագրով նախատեսվում է համայնքի ենթակայության մարզական կազմակերպությունների շենքերի վերանորոգման և մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:

4.Հաշմանդամություն ունեցող անձանց համար սպորտային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ՝

Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում հասարակական կյանքին:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Մշակել և իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային միջավայր ներառելու պայմանների ապահովման հայեցակարգ:

Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական միջոցառումների, սպարտակիադանների մասնակցության ապահովումը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի ոլորտում նախատեսվող և իրականացվող ծրագրերի նպատակն է բարձրացնել մշակույթի դերը, պահպանել և տարածել ազգային մշակութային ժառանգությունը, խթանել անհատի, և հասարակության ստեղծագործական ներուժը, ապահովել ազգային մշակութային ավանդական ձևերի պահպանումը և զարգացումը: Արմավիրի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 1 Արվեստի դպրոց, 1 Երաժշտական դպրոց, 1 Մշակույթի տուն, 1 գրադարանային ՀՈԱԿ՝ 3 մասնաճյուղերով:

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Արմավիրի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է <<Արմավիրի քաղաքապետարանի գրադարան>> ՀՈԱԿ 3 մասնաճյուղով, բնակչության գրադարանային սպասարկումն իրականացնելուն զուգահեռ իրականացվում են գրական, գրական-երաժշտական ցերեկույթներ, գրքերի շնորհանդեսներ, մանկական գրքի շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ: Միաժամանակ իրականացվում է ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ: Ավանդական դարձած գրադարանավարի օրվան նվիրված <<Հանդիպման վայրը գրադարան>> միջոցառումը կազմակերպվում է յուրաքանչյուր տարի:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինում և համալրում
2. Գրականության համալրում
3. Գրադարանային գույքի համալրում
4. Շենքային պայմանների բարելավում

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐ

Արմավիրում գործում է 1 Արվեստի դպրոց, 1 Երաժշտական դպրոց:
Նախատեսվում է երաժշտական և Արվեստի դպրոցների սաների համերգների, հանրապետական և միջազգային մրցույթների մասսայականություն:

Հիմնախնդիրներ՝

1. Երաժշտական և Արվեստի դպրոցների անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրում և շենքային պայմանների բարելավում:
2. Հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով կրթական և սոցիալական ծրագրերի իրականացում:
3. Լավագույն սաների բացահայտում, հանրապետական և միջազգային հարթակներում ներկայանալու համար նպաստավոր պայմանների ստեղծում:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում

Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը՝ միտված մոռացվող ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Հիմնախնդիրներ՝

1. Ազգային, լարային և փողային նվագարանների զարգացման և տարածման գործընթացի համար նշված նվագարանների գծով աշակերտների թվի ավելացում:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Արտադպրոցական դաստիարակության ծրագիր(երաժշտական և արվեստի դպրոցներ)

Ծրագրի նպատակը՝

Իրականացնել մշակութային նախնական մասնագիտական կրթություն, արտադպրոցական գեղարվեստական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, տաղանդավոր երեխաների համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցներում երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության ուսուցման իրականացում: Նախատեսվում է ապահովել արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգման շարունակականությունը:

2. Մշակութային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակը՝

Արմավիր քաղաքի բնակչության լայն զանգվածների ընդգրկումը պետական ազգային և այլ միջոցառումների, ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Արմավիր քաղաքում պետական ազգային և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում: Միջոցառումներ նվիրված հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:

3. Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր

Ծրագրի նպատակը՝

Երաժշտական և արվեստի դպրոցների անհրաժեշտ գույքով, գործիքներով և համապատասխան գույքով ապահովում

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Երաժշտական և արվեստի դպրոցներին համապատասխան գույքով ապահովում

4. Արտադպրոցական դաստիարակություն <<երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում>>

Ծրագրի նպատակը՝

Ազգային, լարային և փողային նվագարանների զարգացման և տրամադրման գործընթացի համար վարձավճարների փոխհատուցման ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն՝

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների ուսուցման կազմակերպում և պրոպագանդում:

5. Գրադարանային ծառայություն

Ծրագրի նպատակը՝

Բնակչությանը գրադարանային տեղեկատվության սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտելիքների տարածում, կրթական համակարգի օժանդակում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:

6. Երաժշտաարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում

Ծրագրի նպատակը՝

Երաժշտաարվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում, ազգային երաժշտական կատարողական արվեստի պահպանումը, տարածումը զարգացումը և ցուցահանդեսների կազմակերպումը:

Ծրագրի համառոտ նկարագրությունը՝

Նախատեսվում են ազգային երաժշտական կատարողական արվեստի ավանդույթների պահպանում, տարածում, զարգացում:

Ներկայացնել երաժշտական և ձայնային ընդունակություններով օժտված երեխաների ստեղծագործական հետաքրքրությունները, միջոցառումների և մրցույթների , այդ թվում, համաքաղաքային, մրցույթների կազմակերպումը և հանրապետական մրցույթներին և փառատոններին մասնակցության ապահովումը:

ՀՀԶԾ ֆինանսավորումը

ՀՀԶԾ ֆինանսավորումը արտացոլված է ստորև ներկայացված ՀՀԶԾ ֆինանսավորման ամփոփաթերթում, որտեղ երևում է, թե ինչ միջոցներով են ֆինանսավորվելու ծրագրերը, որ ծրագրերի իրականացման համար կան առկա միջոցներ, իսկ որոնց համար է անհրաժեշտ գումար ապահովվել, եթե հայտնի են հնարավոր աղբյուրները : Ֆինանսավորվող գումարները նշված են հնգամյա կտրվածքով :

Եզրափակիչ դրույթներ՝

ՀՀԶԾ-ի կազման և իրականացման գործընթացում ներառում են հետևյալ պարտադիր գործընթացները՝

- ՀՀԶԾ մոնիթորինգ
- ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում
- ՀՀԶԾ իրականացում

- ՀՀԶԾ գնահատում
- ՀՀԶԾ կազման գործընթաց

- Բոլոր ծրագրերը իրականացման փուլում պետք է ենթարկվեն մոնիթորինգի, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը : Մոնիթորինգը իրականացվում է համաձայն մոնիթորինգի պլանի : Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն են ներկայացնում հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում

- Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո ՀՀԶԾ-ն հրատարակվում և տեղադրվում է քաղաքապետարանի կայք էջում :

ՀՀԶԾ-ի ընդունումով հաստատվում են ՀՀԶԾ-ում ներառված բոլոր ոլորտային ծրագրերը :

ՀՀԶԾ-ի իրականացման կարևոր մասը հանդիսանում է ոլորտային միջոցառումը, որի պատասխանատուն տվյալ ոլորտի պատասխանատուներն են համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

Համայնքի տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հիմք է հանդիսանում ՀՀԶԾ-ում ընդգրկված համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը , այսինքն սա նշանակում է, որ համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ծրագրերն են, որոնց իրականացման համար նախահաշիվներով հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր:

ՀՀԶԾ-ի իրականացման ընթացքում կարևոր նշանակություն ունի ՀՀԶԾ-ի գնահատման գործընթացի կազմակերպումը, որը ի տարբերություն մոնիթորինգի կենտրոնանում է ոչ թե նկարագրական այլ վերլուծական արդյունքների վրա որն էլ թույլ կտա ծախսերի արդյունավետ և այլընտրանքային լուծումներ առաջարկել հետագայում սխալները չկրկնելու համար:

ՀՀԶԾ կազմման և իրականացման վերահսկողության գործընթացը պետք է լինի առավելագույն չափով մասնակցային: Մասնակցային կառավարումը հնարավորություն է ստեղծում ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության այլ ներակայացուցիչներին տեղական իշխանություններին ներկայացնելու իրենց առաջարկությունները և ծրագրերը, տեսակետները, համայնքի առջև ծառայած խնդիրների արդյունավետ լուծումներ գտնելու համար:

ՀՀԶԾ-ի ընդունումով հաստատվում են ՀՀԶԾ-ում ներառված բոլոր ոլորտային ծրագրերը :

ՀՀԶԾ-ի իրականացման կարևոր մասը հանդիսանում է ոլորտային միջոցառումը, որի պատասխանատուն տվյալ ոլորտի պատասխանատուներն են համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

Համայնքի տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հիմք է հանդիսանում ՀՀԶԾ-ում ընդգրկված համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը , այսինքն սա նշանակում է, որ համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ծրագրերն են, որոնց իրականացման համար նախահաշիվներով հաշվարկվել են համապատասխան եկամուտներ և ծախսեր:

ՀՀԶԾ-ի իրականացման ընթացքում կարևոր նշանակություն ունի ՀՀԶԾ-ի գնահատման գործընթացի կազմակերպումը, որը ի տարբերություն մոնիթորինգի կենտրոնանում է ոչ թե նկարագրական այլ վերլուծական արդյունքների վրա որն էլ թույլ կտա ծախսերի արդյունավետ և այլընտրանքային լուծումներ առաջարկել հետագայում սխալները չկրկնելու համար:

ՀՀԶԾ կազմման և իրականացման վերահսկողության գործընթացը պետք է լինի առավելագույն չափով մասնակցային: Մասնակցային կառավարումը հնարավորություն է ստեղծում ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչներին տեղական իշխանություններին ներկայացնելու իրենց առաջարկությունները և ծրագրերը, տեսակետները, համայնքի առջև ծառայած խնդիրների արդյունավետ լուծումներ գտնելու համար: